

գիրներէ պատմութիւնից այն կողմը չի անցնում. այն ինչ լրագրութիւնը շատ երկրորդական տեղ պիտի բռնէր այնքան հեղինակներէ և նոցա գրական գործերի համեմատութեամբ:

Այս բոլորից երևում որ Հանգուցեալը գործնական կեանքում տապանդաւոր գործիչ չի եղել ոչ էլ հսկայ գրելչ. սակայն նորա գրական վաստակները երկար ժամանակ ամենից հարուստ շահմարան պիտի նկատուին և գրակ պատմութեան համար:

Ս. Յ.

ԱՆԱՇԿԵՐՑԻ ԽԱՍՏՈՒՐ ԳԻՒՂԻ ԲԱՐՔԱՌՈՂ.

Ա՛Ր ԻՄ ԴԱՐՏԵՐ

Դարտով ու ցաւով սիրտս լցվեր ա,
Հաց ուտելուց լէ բլլա կտրեր ա,
Գիշեր ու ցէրէկ դուշուրմիշ կէղնիմ,
Էա թէրմանչ դարախ ճարմի չգտնիմ:

Իմ դարտի դուժան յաչքերս բռներ ա,
Իմ խեղքն ու իմ միտք գլխէս առեր ա,
Կէնիմ որ մարդում մէկ բամի ըսիմ՝
Ըստձ խօսքս կը մօռնամ, մէկ ուրիշ կըսիմ:

Գրելու մէջ լէ իտա համայնիմ,
Խաղամ ըրտի առնիմ ձեռսի, որ բամի գրիմ,
Յեւիօր էա դարտ էլման գիկայ մաքսի,
Կրակ մի կէղնի, կը վառա սիրտսի:

Ուրիշներ գիտան թէ ես գժուերիմ,
Զրուցել ու գրել բլլա մոռցերիմ,
Իմ էղամ չեղամ առերիմ թալան,
Տուն տեղ չունիմ էղերիմ բոչկան:

Փիցան իմ գմշներ, տարան իմ եղներ,
Հարձկին իմ հարօր, մեռան տըղէկներ,
Եարալու կը տըքայ իմ սղախի աղջիկ,
Անգուման կորաւ իմ նորեկ հարսիկ:

Հնցեր ա իմ կարպետ, իմ եօրդան դօշակ,
Հըղ-հղ յիրարուց, էղի կըա-կըտոր,
Փշում խոտմ՝ թալի հիւանդ աղջկա տակ,
Շիւարքերիմ, չգիտամ յուցկա էրթամ դժր:

Ժուկ մի չուտէնք խաւիձ, բլղրէ փլաւ-
Իմ թայլն յօրական կէղնէր մէկ հաա հաւ,

Կը խըմէնք զ'խայվէն, զ'չայ, զ'բախն,
Կը հէճնէնք զ'քուձէթ ձին, կ'իտէնք մըրխն:

Կը մանէնք մայտան, կերթէնք ու գիկէնք,
Զանկուք կը դարկէնք, մըզրախ կը ժըթիկէնք,
Աշխարհ կը թափէր գիկէր թամաշէն,
«Ի՞նչ աղէկ ձիւտօր ա» յիրարու կըսէն:

Կորաւ յըմէն բան, կտորաւ իմ դութան,
Փըլաւի փոխնակ ձեռսի չընկնի թան,
Ա՛խ ֆալաք, թարս դառցուց զըմու չարխի
յակ:

Թողեր ա ընծի խըլղի պատի տակ:
Ժուկ մի կը պարզէնէնք, ես նամուսովիմ,
Իմ նամուսի համար կընկնիմ, կը մէռնիմ,
Մըկայ լէ տընկեցի մէղի խըլղի տան,
Գող ու բող անուն ընծի, իմ հարսին կիտան:

Իտա խըաըր ցաւ յըմէն տարերիմ,
Խեղքսի ցնօրի ու կօրցուցերիմ,
Վախտմի «խունկ ու մոմէնք զօրքով սրբերուն»,
Խարիպ էրկրի մէջ ձութ ու ծաման էղայ բօ-
գերուն:

Յեւիօր յընկերիմ խըլղի դուռ ու փողան,
Կէս կիտան իմ աղէկ անուն, կէս լէ կըսին,
«Սութ ըսան»,
Կէս կըսին - աղէկ մարդ ա, աղէկ բան ըսող ա,
Կէս լէ կըսին «անուն միտէք էնի մարդու
խափող ա»:

Ըսէք - ըսէք, լեզն որ յընկնի դանակ լէ
կը շատնայ՝
Իտա նեղ օրեր կընցնի, դուռնեն համալ չմտա,
Գուման լէ որ մի իմ յաչքէն կը հեռէնայ,
Իտա դարտ ու ցաւ խօ իմ հեա գերեզման լէ
չմտնայ՝

Ի. Միքաէանց.

1900 թ. Յունիս 2-ին.



ԵՐԵՎԱՆԵՐԻ ԸՆԿՈՒԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԻՑ
ՄԷԿԸ.

ԱՌՈՂ, ԶԱՊԱՆԱԿԱՆ ՆՎԱՏՈՂՈՒԹԻՒՆ.

Զգոյին հիւանդութեանց բժիշկ ուսուցչապետ Կրախտ Երկնյըլ հարգողում է թէ մի ուսուցչի Զգոյին իմուլութեան դէմ խորհուրդ տուի ամենից աւելի օգտուել մաքուր